ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Համակարգչային ծառայությունների մատուցման

ք. Երևան «_» _____20 թ.

«ՑԵՆՉՈՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գործադիր տնօրեն Վարդան Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրությանը համապատասխան, մի կողմից և _____-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս ղեկավար _____-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

Հոդված 1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով կատարողը, պարտավորվում է Պատվիրատուի համակարգչում տեղակայել և այնուհետև ապահովել օպերացիոն պրոֆիլակտիկ համակարգի հետագա տեխնիկական սպասարկումը՝ համաձայն Պայմանագրի դրույթների:

Հոդված 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

ա) Կատարողը պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղակայել պրոֆիլակտիկ Համակարգը Պատվիրատուի մոտ:

բ) Կատարողը պարտավոր է ամիսը մեկ անգամ պարբերականությամբ տրամադրել պրոֆիլակտիկ Համակարգի թարմացումները:

գ) Պատվիրատուն պարտավոր է կատարել վճարումներ տեխնիկական սպասարկման համար պայմանագրի հոդված 3-ին համապատասխան:

Հոդված 3. Մատուցվող ծառայությունների գինը և վճարման կարգը

Պայմանագրի գինը կազմում է տարեկան 90.000 (Իննսուն հազար) ՀՀ դրամ:Պատվիրատուն պարտավոր է վերը նշված վճարումը կատարել համապատասխան հաշիվ ապրանքագրի ներկայացումից առավելագույնը երեք բանկային օրվա ընթացքում՝ փոխանցումով:

Հոդված 4. Կողմերի պատասխանատվությունը

ա) Կատարողը պատասխանատու է մատուցվող ծառայությունների պայմանագրով սահմանված ժամկետների պահպանման համար:

բ) Կատարողի մեղքով ծառայությունների մատուցումը հոդված 2-ի «ա» և «գ» կետերում սահմանանված ժամկետներից ուշացման յուրաքանչյուր օրվա

համար, Կատարողը պարտավոր է վճարել տույժ ծառայության գնի 0,1%-ի չափով:

գ) Պատվիրատուն ստացված ծառայությունների համար վճարները հոդված 3-ով սահմանված ժամկետից ուշացնելու յուրաքանչյուր օրվա համար պարտավոր է վճարել տույժ չվճարված գումարի 0,1 %-ի չափով:

Հոդված 5. Պայմանագրի ուժի մեջ մտնելը, դրանում փոփոխությունների իրականացումը և Պայմանագրի դադարեցումը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմ վավերացման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

Եթե Պայմանագրի գործունեության ժամկետը լրանալուց հետո կողմերից ոչ մեկը չի պահանջում լուծել այն, ապա այն շարունակում է գործել ևս մեկ տարի ժամկետով: Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի համաձայությամբ:

Հոդված 6. Այլ դրույթներ

Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակով՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

«ՑԵՆԶՈՐ»ՏԵՂԵԿԱՏՎԱ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ	
Ն/Շենգավիթ 8փ 11բն	
ՀՎՀՀ 02247514	
Հ/Հ 1510008044360100 AMD	
«Արարատբանկ» ԲԲԸ Շենգավիթ մասնաճյուղ	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.